թեան միջազգային եղբայրութեան համար։ Ես յոյս ունեմ, որ դուք ձեր մեծ ու նշանակալից ժամանակի արժանաւոր ու բախտաւոր զաւակները կլինէք և ձեր ժամանակի սոցիալիստական մեծ խորհուրդի համեմատ և ձեր, իբրև նոր սերնդի վրայ դրուած համամարդկային վսեմ պարտականութիւններին արժան գործեր կը կատարէք։

Ողջոյն և յաջողութիւն ձեր սուրբ գործին։

(Շար.)

✓ ՂԱՐԱԲԻԼԻՍԻ ՀԵՐՈՍԱՄԱՐՏԸ

Տարելիցի առթիւ

(Դաշնակցական «Արագած» գօրամասի Նահատակ ընկերների և քաջարի Մովսիսեանի յիշատակին)

I

Երզնկայից Դիլիջան...

Այդ երկար ու անփառունակ ճանապարհն անցանք կարճ ժամանակում։ Եւ մի օր էլ բարոյալքուած և ուժասպառ հայ գօրքը հասաւ Դիլիջան։

Այստեղ, զեկավարներն ասացին նրան, որ «այլևս ազատ ես և կարող ես բռնել ցանկացած ուղին»։

Հայ գօրքը ցնորուած ու տխուր պատրաստուեց ցրուել և մի մասն արդէն ցրուել էր, երբ հասաւ Երևանի Հայոց Ազգային Խորհրդի հեռագիրը «Դիմացէք երեք օր ևս և հնարաւորութիւն ունէք բանակցութիւններ սկսելու Թիւրքերի հետ»։

Երեք օր ևս դիմանալ!

Այդ նշանակում էր ամենակարճ ժամանակի ընթացքում ի մի հաւաքել ցրուած գօրքերը, կարգի բերել լքուած շարքերը, ոգի ներշնչել նրանց և վերագտնալ Ղարաքիլիսէ։

Դժուարին խնդիր, բայց և այնպէս պէտք էր գլուխ բերել, պէտք էր բարոյալքուած ու ցիրուցան զինուորներից մարտական միաւորներ ստեղծել։

Մի խօսքով պէտք էր հրաշք կատարել և կատարուեց հրաշքը...

—

Դիլիջանի հայոց եկեղեցու բակում հազարաւոր զինուորներ խռնուել էին «Արագած» գօրամասի հրամանատար Գ. Նժդեհի շուրջը և լսում էին նրան։

Նժդեհին հրամայուած էր անմիջապէս վերագտնալ Ղարաքիլիսէ, հետախուզելու Թշնամու դիրքերն ու ոյժերի դասաւորումը և տեղեկագրել։ «Վայրկեանը ճակատագրական է վերջացրեց Նժդեհը — ով դեռ չի դաւաճանել Հայ ցեղին, թող հետևի ինձ։

Եւ «Արագած»ը բազմահազար ամբոխի ուռանների տակ, բռնեց Ղարաքիլիսէի ճանապարհը։

II

Լուսաբացին արդէն ամբողջ գօրքը գիտէր, որ «Արագածը» Վարթանլուի մօտ Թուրքերի հետ բախում է ունեցել, մտել Ղարաքիլիսէ գիշերուայ ժամի երկուսին և բռնել Արշուքի սարը։

Երանելի՜ օր...

Ի՜նչ ոգևորութիւն, ի՜նչ հպարտ գիտակցութիւն, որ այս անգամ նախայարձակը մենք ենք։

Երեկոյեան դէմ Գուգարաց լեռներից Թշնամու մեծ զօրախմբեր երևացին մեր աչ թևի ուղղութեամբ։

Այլևս կասկած չկար, որ Թշնամին սպառնում էր պաշարել մեզ։

Այդ գիշեր կուռ կողմերը աչք չփակին, շնանգստացան։

Թշնամին սեղմում էր օղակը, մերոնք յուսահատ՝ գրոհում էին ու գրոհում։

Լուսաբացին, մեր յամառ դիմադրաւումը հասել էր ամենակատարի և հերոսական աստիճանի։

III

Կուի նախաձեռնութիւնը չկորցնելու համար հարկաւոր էր, դեռ լոյսը չբացուած, որև է ակռով անհանգստացնել Թշնամուն։

«Արագած»ի հեծեալ մասին հրամայուեց, կատարելու այդ քայլը։

Գիշերուայ ժամի 2-ի մօտերին, Արշուքի դաշտերում լսուեց «ուռա»-ի ձայն, որին հետևեցին ձեռնառումբերի պայթիւններ։

Դա մեր գրոհն էր։

Շուտով [illegible] վրայ Թշնամու կողմից սկսուեց մի չտեսնուած քաջասային հրաձգութիւն։

Մթութեան մէջ, Արշուքի դիմացի սարից, մի քանի անգամ, անընդատակ, գոռաց Թշնամու դաշտային թնդանօթն ու լռեց։

«Արագածը» երկրորդ գրոհով մտաւ Արշուքի և ստիպեց Թշնամուն փախչելու իր թնդանօթները, բայց չկարողացաւ երկար մնալ թուրք գիւղում, որովհետև, լուսաբացին պարզուեց, որ ինքը սեպաձև թաղուել է Թշնամու ճակատի մէջն և, որ մեր թևերը գիշերուայ ընթացքում բնաւ չէին առաջացել։

Այդ դրութիւնից դուրս գալու համար զօրամասի հրամանատարը դիմում է մի ռազմագաւթ։ Կարգադրում է գիւղի եզերքին, մի քանի տեղ խարոյկներ վառել, որոնց վրայ հրաւիրելով Թշնամու ուշադրութիւնն ու կրակը՝ հնարաւորութիւն է ստեղծում իր զօրամասին առանց կատաստրոֆի յետ քաշելու դէպի գիշերուայ դիրքերը։

Լուսաբացին կռիւը ծաւալուեց։

(Շար.) Զինուոր Երանդ

Խմբագիր՝

Հ. ԱՍԱՏՐԵԱՆ